

4904

ՏՐՈՑԿԻՍՏԱԿԱՆ
ԲԱՆԴԱՅԻ ԱԶ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԸ

Պատմական տեղեկանք

3KՈՒ

S-93

ՀԱՅԿՈՒՍԶՐԱՏ



1937



ՅԵՐԵՎԱՆ

15 JUL 2005

14 NOV 2009

3KNI
S-93 9


ՏՐՈՑԿԻՍՏԱԿԱՆ
ԲԱՆԴԱՅԻ ԱԶ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԸ

Պատմական ճեղհանք

24 AUG 2013

4904

ПРАВЫЕ СООБЩНИКИ
ТРОЦКИСТСКОЙ БАНДЫ
ИСТОРИЧЕСКАЯ СПРАВКА
Армиздат, Ереван, 1937



Թարգմ. Հ. Տ.-Հովհաննիսյան
Խմբագիր Վ. Մովսիսյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Ա. Նվուհյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արովյան

Դրավիտի լիազոր Ի—4915, հրատ. № 495,
Պատվեր № 161 տիրած 10.000

Հանձնված է արտադրության 10/VIII 1937 թ.

Ստորագրված է տպագրելու 20/VIII 1937 թ.

Դիմել 25 հ.

Հայկուսերատի տպարան, Յերևան, Ալավերդյան № 71

Մոտ անցյալում վերջացած ՀամԿ(բ)Կ-ի պլենումն է թիվս ուրիշ հարցերի քննարկելով նաև Բուխարինի ու Ռիկովի հակա-կուսակցական դործունեության հարցը, վորոշեց հետաքննել նրանց ՀամԿ(բ)Կ-ի շարքերից:

Աջ թեքման նախկին լիդերները, նրանց ամենամերձավոր զինակիցները—Ուլլանովը, Ռյուտինը, Կուլիկովը, Կոտովը, Յա-կովլևիչը և ամբողջ բուխարինյան դավրոցիկը՝ Սլեպկովը, Մարեց-կին, Զայցևը, Ռոդիտը, Աստրովը և մյուսները դարձան ԽՍՀՄ-ի դեմ ինտերվենցիա կազմակերպող տրոցկիստական բանդայի ա-նարգ դործակիցները: Ինտերվենցիա, վորի նպատակն էր վերա-հաստատել մեզանում կապիտալիզմը:

* * *

Աջ թեքման նախկին լիդերները—Բուխարինը, Ռիկովը, Տոմսկին քանիցս պայքար են մղել Լենինի դեմ, հաճախ պրոլե-տարական հեղափոխության, պրոլետարիատի ղեկավարության արմատական հարցերի շուրջը:

Կուսակցության պատմությունն ասում է մեզ, վոր Բուխա-րինը, Ռիկովը, Տոմսկին քանիցս հանդես են յեկել կուսակցու-թյան դեմ Տրոցկու, Պյատակովի, Ռադեկի հետ միասին, Կա-մենևիչի ու Զինովյեվի հետ միասին: Լիկվիդատորության դեմ մղվող պայքարի ժամանակաշրջանում Ռիկովը Կամենևիչի հետ միասին հանդես յեկավ Լենինի բոլոր հիմնական բանաձևերի դեմ, պաշտպանելով ոտզովիստներին: Ռիկովն ու Տոմսկին պահան-ջում էին համաձայնություն կնքել լիկվիդատորների և Տրոցկու հետ, ամեն կերպ հակառակելով լիկվիդատորների հետ կապերը խզելուն:

Պատերազմի տարիներին Բուխարինը և նրա խումբը հանդես յեկան իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխության վերա-բերյալ լենինյան ուսմունքի դեմ:

Բուխարինը ի հակակշիռ Լենինի պնդում եր, վոր հակասու-
թյուններն իմպերիալիզմի դարաշրջանում նվազում են, վոր կա-
պիտալիստական տնտեսությունը դառնում է ավելի ու ավելի
կազմակերպված: Բուխարինը Պյատակովի հետ միասին ձեռն
այդպես ել ժխտում եր, վոր ճնշված աղբերի աղբային-ազատա-
դրական շարժումը կարող է պրոլետարիատի դաշնակիցը լինել՝
պրոլետարական հեղափոխության մեջ: Դրանից յեղևելով Բու-
խարինը պայքարում եր աղբերի ինքնորոշման իրավունքի վերա-
բերյալ լենինյան լոզունգի դեմ:

Բուխարինը հանդես եր դալիս նաև իմպերիալիստական պա-
տերազմը քաղաքական պատերազմի վերածելու, իր կառավարու-
թյան պարտության լենինյան լոզունգի դեմ, առաջ քաշելով «խա-
ղաղության» և «ղինաթափման» պացիֆիստական լոզունգները:

Նա նույնպես հանդես եր դալիս պետության վերաբերյալ
մարքսիստական-լենինյան ուսմունքի դեմ, պաշտպանելով կիսա-
անարխիստական հայացքներ:

Տոմսկին մի խումբ աքսորական բուլճարիկների աջն հարցին,
թե նա ինչ վերաբերմունք ունի դեպի պատերազմը, պատասխա-
նել է խսկական պաշտպանողական նամակով, վորի մեջ նա
պաշտպանում եր Պլեխանովի տեսակետը և գրում եր, թե Ռու-
սաստանը պետք է սիրել աշխատեալ, ինչպես նա կա՝ «Ահա աշխ-
պեա, ինչպես Ձեխովի Ֆիրսը սիրում է բալենու պարտեղը»:

1917 թվականին Բուխարինը և Ռիկովը հանդես յեկան բուր-
ժուական դեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստական
հեղափոխության վերածելու լոզունգի դեմ:

Բուխարինը 1917 թ. ամառը VІ համագումարում գրախից
նույնպիսի դիրք, վորպիսին ապրիլյան կոնֆերենցիայում պաշտ-
պանում եր Կամենևը: Բուխարինն ըստ եյուլթյան ժխտում եր
Հոկտեմբերյան հեղափոխության սոցիալիստական բնույթը. նա
պնդում եր, թե քանի վոր պրոլետարիատը պայքարում է գյու-
ղացիության հետ միասին, ապա ուրեմն այդ սոցիալիստական
հեղափոխություն չէ:

Այն ժամանակ յերբ կուսակցությունը մասնաներին պատ-
րաստում եր զինված յելույթի, Ռիկովը Կամենևիի հետ միասին
հանդես յեկալ զինված յելույթ նախապատրաստելու դեմ: Նա
պաշտպանում եր Նախապառլամենտին մասնակցելու ոպորտունիս-
տական գիծը, աշխատեալ հետո, յերբ կուսակցությունը դատա-
պարտեց այդ գիծը: Պրոլետարական սոցիալիստական հեղափո-
խության հաղթանակից հետո Ռիկովն ըստ եյուլթյան հանդես յե-

կալ պրոլետարիատի դիկտատուրան լիկվիդացիայի յենթարկելու
ուղտին, առաջարկելով կառավարություն ստեղծել ըստ սոցիա-
լիստական կուսակցություններից՝ սկսած բուլճարիկներից մինչև
կիսակաղեւները ներառյալ:

1918 թվականին Բուխարինը Տրոցկու հետ միասին հանդես
յեկալ Բրեստի հաշտության դեմ և ձախ-հսերական հակահեղա-
փոխականների հետ միասին դարձելի պլաններ եր կառուցում
Լենինին ձերբակալելու և Պյատակովին հակահեղափոխական կա-
ռավարության գլուխ կանգնեցնելու համար:

Կուսակցության VІІІ համագումարում, 1919 թվականին, կու-
սակցության ծրագրի քննարկման ժամանակ Բուխարինը նորից
հանդես յեկալ «մաքուր» իմպերիալիզմի թեորիայի պաշտպա-
նությամբ:

1921 թվականին Ռիկովը հանդես յեկալ ԳՈՆԼՈՒՄ-ի լենի-
նյան պլանի դեմ:

1921 թվականին Բուխարինը պրոֆմիութենական ղիսկու-
սիայում հանդես յեկալ «բուլճարի» պլատֆորմով, իսկ աշու-
հետևանցով տրոցկիստական պլատֆորմի ուղղակի պաշտպանու-
թյանը: Դեռ մինչև այդ Տոմսկին և Ռիկովը հանդես յեկան աշա-
պես կոչված դեմոկրատական ցենտրալիզմի հակակուսակցական
խմբի դիրքը պաշտպանելու ուղտին:

1925 թվականին Բուխարինը հանդես յեկալ «հարստացե՛ք»
լոզունգով, վորն ըստ եյուլթյան կապիտալիզմը վերահաստատելու
կոչ եր:

Սակայն Բուխարինը, Ռիկովը, Տոմսկին սուսնձին մոլեղ-
նությամբ ծավալեցին իրենց պայքարը լենինյան կուսակցության
դեմ հենց աշխատանքաշրջանում, յերբ պրոլետարիատի դիկ-
տատուրան, զգալիորեն ամրապնդվելով քաղաքացիական պատե-
րազմին հաջորդած առաջին տարիներում, սկսեց իր ուժեղացրած
հարձակումը կապիտալիստական տարրերի վրա:

ԱԶ ՈՊՈՐՏՈՒՆԻՍՏՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻՆ ՑՈՒՅՑ ՏՐՎՈՂ
ԿՈՒԼԱԿԱՑԻՆ ՀԱԿԱՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԻՄԱԴՐՈՒԹՅԱՆ
ԱՆՄԻՋԱԿԱՆ ԾՆՈՒՆԴԻՆ ՆՅՈՒՆ

Այլ ոպորտունիստների պայքարը կուսակցության դեմ ամ-
բողջ ծավալով դարգացալ կուսակցության XV և XVI համագու-
մարների միջև ընկած ժամանակամիջոցում:

Մենք պետք է զիմենք մեր յերկրում աշխատանքամիջո-

ՊՈԱԺ ղոյությունն ունեցող տնտեսական ղրությանը, դասակարգելիքի այն ժամանակվա հարաբերակցությանը, վորպեսզի հասկանանք, մի կողմից՝ այն խնդիրները, վոր այն ժամանակ ծառացան կուսակցության առջև և վորոնք հանձարեղ կերպով ձևակերպվեցին ընկեր Ստալինի կողմից, մյուս կողմից՝ սոցիալական այն բաղան, վորը ծնեց Բուխարինի, Ռիկովի, Տոմսկու ղլխավորած աջ թերթերը:

1928 թվականին մեր տնտեսությունն արդեն անցել էր մինչհեղափոխական մակարդակից: Արդյունաբերությունը տվեց 1,5 անգամ ավելի արտադրանք, քան 1913 թվականին: Ցանքի տարածությունը նախապատերազմականից գերազանցեց 8 միլիոն հեկտարով և հասավ 113 միլիոն հեկտարի: Վերականգնված արդյունաբերությունը և վերականգնած գյուղատնտեսությունն արդեն այդ ժամանակ երապես տարբերվում էին իրենց նախահեղափոխական ղրությունից:

Արդյունաբերության վերականգնումը չէր նշանակում առանց բացառության բոլոր մինչհեղափոխական ձեռնարկությունների վերականգնում: Մանր, կենսատնայնագործական ձեռնարկությունները վերականգնվում էին վերջին հերթին, կամ բոլորովին կոտորվացվում էին: Այդպես կոտորվացվեցին տասնյակ մանր հանքահորեր և մի շարք սակավազոր դոմնաներ: Արդեն առաջ էր գնում նաև նոր շինարարությունը: Դեռևս վերականգնման ժամանակաշրջանում կառուցվեցին Վոլխովի հիդրոկայանը, Կիլեյովոյի, Շատուրսկի, Կաշիրի ելեկտրակայանները և այլ ձեռնարկություններ: Չնայած այն բանին, վոր արդյունաբերական արտադրանքը 1913 թվականից 1,5 անգամ աճեց, ելեկտրականության ղործածությունն աճեց ավելի քան 2,5 անգամ, վորը վկայում էր տեխնիկական վորոշ պրոգրեսի մասին: Փոխվեց նաև գյուղատնտեսության ղեմքը: Յեթե մինչև հեղափոխությունը կալվածատիրական և կուլակային տնտեսություններում արտադրվում էր ամբողջ հացի կես մասը, կալվածատերերն ու կուլակները ապրանքային հացի ղլխավոր պահոններն էին (70%-ից ավելին), ապա 1926—1927 թվականին կուլակությունն արտադրում էր ամբողջ հացի 13%-ը և տալիս էր ամբողջ ապրանքային հացի 20%-ը: Հացի հիմնական արտադրողներն ու վաճառողներն արդեն միջակներն ու ղքավորներն են: Յերևան յեկան խորհատնեսություններն ու կոլտնտեսությունները:

Դյուղում յերևան յեկան նաև նոր տեխնիկայի տարրերը: 1928 թվականի հոկտեմբերի 1-ին գյուղատնտեսությունն ուներ

արդեն 26733 տրակտոր: Յերևան յեկան առաջին մեքենա-տրակտորային կայանները և այլն:

Սակայն թե՛ արդյունաբերությունը, թե՛ գյուղատնտեսությունն իրենց տեխնիկական մակարդակով դեռևս հեռու չէին գնացել մինչհեղափոխական ժամանակվա մակարդակից: Արդյունաբերության արտադրանքի մեծ մասը պատրաստվում էր հին ձեռնարկություններում, վորոնց համարյա չէր ղիպել վերակառուցումը: Ահա թե ընկեր Ստալինը Համկ(բ)Կ ԿԿ-ի 1928 թ. նոյեմբերի 19-ի պլենումում արտասանած իր ճառում ինչպես էր բնութագրում մեր արդյունաբերությունը.

«Փոքրաթիվ խոշոր արդյունաբերական միավորների կողքին, վորոնք ավելի կամ պակաս ղափով հիմնվում են նոր տեխնիկայի վրա, մենք ունենք հարյուրավոր ու հազարավոր ֆարքիկաներ և ղործարաններ, վորոնց տեխնիկան վ՛՛չ մի քննադատության ղի ղիմանում արդի նվաճումների տեսակետից»¹:

Ավելի ևս հետամնաց էր գյուղատնտեսությունը: Խորհատնեսությունների և կոլտնտեսությունների տեղը գյուղատնտեսության արտադրանքի մեջ դեռևս աննշան էր:

Ընկեր Ստալինը նույն ճառում նշել է.

«Մեր յերկրում մանր ապրանքարտադրողների ղերակշռող մեծամասնության առկայությունը, նրանց մասնատված, բոլորովին հետամնաց արտադրությամբ, վորի համեմատությամբ մեր խոշոր սոցիալիստական արդյունաբերությունը յերևում է վորպես մի կղզի ծովի մեջ, կղզի, վորի բաղան ընդարձակվում է որ-ամուր, վորը սակայն դեռևս կղզի յե ծովի մեջ»²:

Մանր, մասնատված գյուղատնտեսությունը չէր կարող քաղաքին այնքան հաց տալ, վորքան այդ պահանջում էր աճած պահանջարկը: Դյուղատնտեսության մասնատվածությունը, խոշոր տնտեսությունների տեսակարար կշռի նվաղումը (խոշոր կալվածատիրական հոլատիրության անհեռացումը չէր փոխհատուցվել առաջացած սոցիալիստական տնտեսություններով — խորհատնեսություններով և կոլտնտեսություններով) առաջ բերեց նրա ապրանքայնության իջեցումը: 1926—1927 տարում, յերբ հացի համախառն արտադրանքը ղրեթե հավասարվել էր

¹ Ստալին, Լենինի ղմի հարցերը, էջ 358, ուսու. 9-րդ հրատ.

² Նույն տեղում, էջ 361:

1913 թվականի արտադրանքին, ապրանքային հացի քանակը կրկնակի քիչ եր 1913 թվականի համեմատությամբ: Դրանից ոգտըվեցին կուլակները, վորոնք հրաժարվեցին հացը վաճառել պետությունը և այն ծախում եյին շուկայում սակելուանտային գներով: Գյուղին քաղաքի կողմից ցույց տրվող արտադրական-տեխնիկական ոգնությունը դեռ նոր եր միայն սկսվել: Փոքրածիվ և այն ել սակավադոր տրակտորների պարկը համարյա ամբողջովին բաղկացած եր իմպորտային մեքենաներից: 1924—1928 թվականներին ընթացքում գյուղատնտեսությունը տրամադրված 28779 տրակտորներից 26080—ը իմպորտային եյին: Տրակտորների արտադրությունը կենսորոնացել եր հին գործարաններում («Կրասնի Պուտիլովեց», «Կրասնի Պրոֆինտերն»), վորոնք հարմարեցված չեյին հարահոս սխեմով տրակտորներ արտադրելուն:

Ապրանքաշրջանառություն մեջ դեռ բավական զգալի դեր եր խաղում մասնավորը, թեպետև նրա նշանակությունը տարեցուտորի ընկնում եր: 1923—1924 տարում մասնավորը իր ձեռքին եր պահում ամբողջ հատավաճառ ապրանքաշրջանառության 57,7 տոկոսը, իսկ 1928 թվականին—միմիայն 22,5 տոկոսը: Քաղաքի սակելուանտը բարձրացնում եր ապրանքների գները, սարտատիլյեր յենթարկում քաղաքի պլանաչափ մատակարարումը: 1928 թվականը մասնավոր առևտրի շրջանառությունների վոչ միայն հարաբերական, այլև բացարձակ նվազման առաջին տարին եր: 1926—1927 տարվա 5,1 միլիարդ ռուբլուց մասնավոր առևտրի շրջանառությունները 1928 թվականին իջան 3,4 միլիարդ ռուբլու: Կոոպերատիվ և պետական առևտրի զարգացումը հեռ եր մնում և լիովին չեյր ծածկում պահանջարկը: Ամբողջ հատավաճառ ապրանքաշրջանառությունը 1926—1927 թ. մինչև 1928 թ. աճեց ընդամենը 9 տոկոսով: Վրա հասավ ապրանքային սովը:

Ժողովրդական տնտեսություն վերականգնման պայքարի ավարտումը կուսակցությանը, խորհրդային իշխանությունը, ամբողջ յերկիրը հասցրեց մի անհրաժեշտություն, այն ե՝ լուծել իր շարժման հետագա ուղղության հարցը: Համգ(բ)Կ XV համագումարին տված՝ ԿԿ-ի քաղաքական հաշվետվության մեջ ընկեր Ստալինն այսպես եր վորոշում այդ խնդիրները.

«Կուսակցության խնդիրն ե՝ ընդարձակել ու ամրացնել մեր ագիտական իշխող բարձունքները ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում՝ ինչպես քաղաքում, նույնպես և գյուղում, գնալով դեպի ժողովրդական

տնտեսության մեջ յեղած կապիտալիստական տարրերի վերացումը»¹:

Սնդիրն եր՝ վերակառուցել ամբողջ արդյունաբերությունը առաջավոր, ժամանակակից տեխնիկայի հիման վրա ու մինչև վերջը դուրս մղել կապիտալիստական տարրերը:

Անհրաժեշտ ե նոր կադրեր ստեղծել ձեռնարկությունները ղեկավարելու և նոր, ժամանակակից, առաջավոր տեխնիկային տիրապետելու համար: Կուսակցությունը բոլոր միջոցները մորիլիզացիա արեց, վորպեսզի ավելի արագ տեմպով առաջ շարժի արդյունաբերության և տրանսպորտի սոցիալիստական վերակառուցումը: 1928—1929 տարում արդյունաբերության մեջ ու տրանսպորտում հիմնական աշխատանքներ կատարելու համար ներդրվեց 2·700 միլիոն ռուբլի, վորը նշանակում եր 20 տոկոսով ավելացում նախորդ տնտեսական տարվա համեմատությամբ: Այդ նշանակում եր, վոր յերկրի ինդուստրացման տեմպերն զգալիորեն ուժեղանում են:

Սոցիալիստական վերակառուցումը գյուղում, վորտեղ դեռակուռ եր դեռևս հետամնաց մանր անհատական գյուղացիական տնտեսությունը, նշանակում եր թե՛ տեխնիկական քաղաքի վերակերտում և թե՛ միաժամանակ վերակերտում անհատական աշխատավորական գյուղացիական տնտեսության, նրա փոխադրումը կոլեկտիվացման ռելսերի վրա:

Սոցիալիստական հարձակման ուժեղացումն առաջ բերեց և չեյր կարող առաջ չբերել հուսահատական ղեմադրություն կապիտալիստական դատակարգերի մնացորդների կողմից, բանվոր դատակարգի ղեկատարության թշնամի բոլոր տարրերի կողմից: Դատակարգային կոիվը յերկրում չափազանց սրվեց:

Կուլակությունը պայքար ծավալեց պետական հացամթերումների դեմ, սագրելով գյուղացիությանը, վորպեսզի նա հաց չհանձնի պետությանը, դրանով իսկ փորձելով վիժեցնել սոցիալիստական շինարարությունը: Կուլակները հացի սակելուացիա եյին զարգացնում: Կուլակները կադմակերպում եյին հացամթերումների լիազորների և գյուղի այլ աշխատողների սպանություններ, հրկիզում եյին հացահատիկի հանձման կայանները և այլն:

Կուլակային սարտատիլն կուսակցությունը պատասխանեց

¹ Ստալին, ԿԿ-ի քաղաքական հաշվետվությունը Համգ(բ)Կ XV համագումարին, էջ 25, ռուս. հր. 1937 թ.:

արտակարգ միջոցառումներով. հացի սպեկուլացիա անողները կանչվում եյին դատական պատասխանատվութեան, բռնադատվում եյին կուլակների թաղցրած հացի պաշարները: Կուլակցական կազմակերպութիւնները մօրիլիզացիայի յենթարկեցին զոհողի չքավոր-միջակ մասսաներին և կոտրեցին կուլակութեան սարսափը:

Դատակարգային պայքարն այդ ժամակաշրջանում սրվեց վոչ միայն դրուղում, այլև շինարարութեան մյուս բնագավառներում:

Այդ կապով եր նաև վոդչ միջադպիսին իրադրութեան հետ, վորը բնորոշ եր դարձել ԽՍՀՄ-ի դեմ ուղղված ինտերվենցիոնիստական միտումների ուժեղացումով: Այն ժամանակ կապիտալիզմի մասնակի կայունացման հողի վրա ել ավելի սրբվեցին հակասութիւնները համաշխարհային կապիտալիստական սխտեմի ներսում և կապիտալիստական աշխարհի ու ԽՍՀՄ-ի միջև: Կապիտալիստական յերկիրներում սրվեց պայքարը շուկաների համար, ուժեղացավ սպառողներին աճումը, տենդորեն ծավալեց կապիտալիստական պետութիւնները՝ նոր պատերազմների համար նոր կոալիցիաներ ստեղծելու և ուժերը դասավորելու աշխատանքը, ուժեղացավ ճնշումը բանվոր դասակարգի և զաղութային ժողովուրդների վրա: Դրա հետ միաժամանակ աճում եր հեղափոխական շարժումը գաղութներում ու Յեմբրոպայում, աճում եր կոմկուսների ազդեցութիւնը: Զգալիորեն ուժեղացավ Խորհրդային Միութեան հզորութիւնը, նրա ազդեցութիւնը և հեղինակութիւնը կապիտալիստական յերկիրներին բանվորների ու աշխատավոր մասսաների մեջ: Այդ պայմաններում, յերբ ԽՍՀՄ-ն աճում և զարգանում եր վորպես կառուցվող սոցիալիզմի յերկիր, յերբ խորտակվեցին իմպերիալիստների հույսերը, թե ԽՍՀՄ կընտելանա, թե նա կապիտալիստական վերասերման կենթարկվի, յերբ ԽՍՀՄ-ն ակնհայտորեն Յեմբրոպայի բանվոր դասակարգի և գաղութների ճնշված ժողովուրդների դրոշը դարձավ, — աշխուժացան իմպերիալիստների ինտերվենցիոնիստական միտումները, ԽՍՀՄ-ն մեկուսացնելու, նրան շրջապատելու, նրա դեմ պատերազմելու պայմաններ նախապատրաստելու ձգտումը: Իմպերիալիստների նպատակն եր՝ ջախջախել ԽՍՀՄ-ն վորպես հեղափոխութեան ոջախ, մասնավաճ վոր նա վաճառահանման խոշորագույն շուկաներից մեկն եր հանդիսանում,

վորպեսզի ճանադարհ հարթեն ապագա իմպերիալիստական պատերազմների համար, վորպեսզի ճնշեն բանվոր դասակարգին, սանձահարեն գաղութների ժողովուրդներին և այդպիսով ամրացնեն իրենց թիկունքը:

Այդ ինտերվենցիոնիստական միտումները գլխավորում եր Անգլիան: Անգլիական պահպանողական կառավարութիւնը խզեց գլխահագիտական հարաբերութիւնները ԽՍՀՄ-ի հետ, ուժեղացրեց ճնշումը Յրանսիայի, Իտալիայի և մյուս յերկիրների վրա, վորպեսզի նրանց դրդել հարաբերութիւնները խզելու ԽՍՀՄ-ի հետ, կազմակերպեց ԽՍՀՄ-ի վարկային-տնտեսական բլոկադը, անգլիական վարձկանների դավադրութիւններ ու տնտրիստական ակտեր ԽՍՀՄ-ում, աջակցեց հակահեղափոխական խմբավորումներին Կովկասում, առանձնապես Վրաստանում, Ուկրաինայում և այլն:

ԽՍՀՄ-ի դեմ այն ժամանակ միասնական ճակատ ստեղծելու համար Անգլիայի կատարած վորժը չհաջողվեց: Դրան խանգարեցին իմպերիալիստների բանակում գոյութիւն ունեցող չահերի հակասութիւնները, մեքանի յերկիրների չահադրդովածութիւնը ԽՍՀՄ-ի հետ տնտեսական կապեր ունենալու նկատմամբ, Յեմբրոպայի բանվոր դասակարգի հակազդեցութիւնը և այլն:

1927 թվականի դեկտեմբերին, կուսակցութեան XV համագումարում, ընկեր Ստալինն ասել ե.

«... այժմ մենք բոլոր հիմքերն ունենք հաստատելու, վոր «խաղաղ կենսկցութեան» ժամանակաշրջանն անցյալի գիրկն ե անցնում, տեղը գիջելով՝ ԽՍՀՄ-ի դեմ իմպերիալիստական հանկարծական հարձակումներ գործելու և ինտերվենցիա պատրաստելու ժամանակաշրջանին»:

Յեմ մի քանի կապիտալիստական յերկիրների՝ ԽՍՀՄ-ի հետ խաղաղ հարաբերութիւններ շարունակելու տենդենցի հետ մեկտեղ շարունակում եր գործել և ուժեղանալ մյուս կապիտալիստական յերկիրների տենդենցը՝ ինտերվենցիա, ավանտյուրիստական հարձակումներ կատարելու ԽՍՀՄ-ի դեմ: Այդ արտահայտվեց Զին-Արևելյան յերկաթուղու գրավումով, վոր կատարվեց չինական միլիտարիստների ձեռքով, ԽՍՀՄ-ի արտասահմանյան ներկայացուցիչների դեմ մահափորձեր կատարելով, ռուսերեկրյա հետախուզութիւնների գործակալների ձեռքով միաստարարութիւն կազմակերպելով, պայթեցումներ ու հրձիգումներ կազմակերպելով:

1928 թվականին Միացյալ Պետքադավարչության որդանները հայտնաբերեցին Դոնբասում, Շախտիի հանքային շրջանում, վնասարարական մի կադմակերպություն, վորն ստեղծվել էր նախկին հանքատերերի, նաև անցյալում առանձնապես արտոնյալ մասնագետների խմբի ձեռքով. այդ կադմակերպությունը կապված էր նախկին ռուս և ոտարերկրացի սեփականատերերի հետ, ինչպես նաև ոտարերկրյա ռազմական հետախուզության հետ, և բացի այլ խնդիրներից նա իրեն նպատակ էր դրել՝ վիժեցնել Սորհրդային Միության պաշտպանությունը և ուղղակի պատրաստվել ՍՍՀՄ-ի դեմ ինտերվենցիա կատարելու և պատերազմ մղելու:

Շախտիի դործը համամիութենական նշանակություն ստացավ, վորովհետև նա յերևան բերեց բուրժուական հակահեղափոխության կողմից պրոլետարական պետության դեմ, սոցիալիստական ինդուստրացման դեմ կիրառվող պայքարի նոր ձևերը և նոր մեթոդները: Շուտով պարզվեց, վոր «շախտիականները» մենակ չեն. վնասարարները բուն եյին դրել արդյունաբերության նաև մյուս ճյուղերում:

Շախտիի դործը ցույց տվեց, վոր բուրժուական հակահեղափոխությունը փորձեց ոգտագործել այն ժամանակվա դեռևս գոյություն ունեցող մեր հետամնացությունը տեխնիկական գիտելիքներում, տեխնիկական ղեկավարման փորձի և հմտությունն ապարիզում և պրոլետարիատին ճակատամարտ տալ այդ բնագավառում:

Բուրժուական մի շարք մասնագետներ, վորոնք այն ժամանակ արդյունաբերության մեջ պլանային որդաններում և գիտական հիմնարկներում գրավում եյին ալեկի կամ պակաս պատասխանատու պոստերի մեծ մասը, գիտակցաբար վնասում եյին թե՛ արդյունաբերության մեջ, թե՛ պլանային որդաններում, նպատակ ունենալով վիժեցնելու կուսակցության դրած խնդիրների կատարումը:

Բոլոր այդ բուրժուական թափթփուկները վճռականորեն վրադի եյին յեղում արդյունաբերության զարգացման արագ տեմպերի դեմ, արդեւք եյին հանդիսանում տեխնիկական վերակառուցմանը: Նրանցից միքանիսը այդ հիմնադրում եյին նրանով, վոր իբր թե անհնարին է մեր պայմանների մեջ փոխադրել ամերիկյան տեխնիկան: Մյուսները մինչև այնտեղն եյին հասել, վոր ասում եյին, թե մեզ ամերիկյան տեխնիկա պետք էր չի, քանի վոր մեզ մոտ բանվորական ուժը եժան է և մեզ հա-

մար ալեկի լավ է ոգտագործել բանվորների Ֆիզիկական դիմացկունությունը: 1928 թվականին յերկրում դեռևս կար մոտ 1,5 միլիոն գործազուրկ: Յեւ ահա, հայտնի մենչեևիկ Պ. Մասլովը քարոզում էր տեխնիկապես հետամնաց շինարարության նպատակահարմար լինելը, վորպեսզի այդպիսով նվազեցվի գործազուրկների թիվը:

Հասկանալի է, վորք չէր հին ինժեներներին և գիտնականներին թիվը, վորոնք արդեն այն ժամանակ համամիտ չէյին վերահիշյալ բուրժուական մասնագետների բուրժուական-վնասարարական գաղափարներին: Այնպիսի մարդիկ, ինչպիսիք Վինտերը, Բախը, Գրաֆտին, Վեդենեյեվը, Ալեքսանդրովը, Բարդինը, Շատելենը, Ռոտերտը և մյուսները, խորհրդային իշխանության առաջին իսկ որից ազնվորեն կանգնեցին բանվոր դասակարգի դիրքում և նրա հետ միասին ալտիվ կերպով մասնակցեցին սոցիալիզմի շինարարությանը:

Սակայն բանվոր դասակարգի մարդկանց թիվը ինժեներատեխնիկական ինտելիգենցիայի մեջ դեռևս քիչ էր: Ճիշտ է, ինժեներատեխնիկական աշխատողների ընդհանուր թիվը խոշոր արդյունաբերության մեջ 1924 թվականից մինչև 1928 թվականը ներառյալ աճել էր 1,5 անգամ: Այդ տարիների ընթացքում արդյունաբերության մեջ ներգրավվեց վորպես ինժեներներ և տեխնիկներ՝ 51 հազար մարդ: Սակայն այդ լրացումները բավական չէյին, մանավանդ վոր այդ լրացումների մեջ կային բուրժուական վորդերներ, վորոնք փոքրաթիվ չէյին: Ընդամեն յերիտասարդ մասնագետները դեռևս զգալի դեր չէյին խաղում տնտեսության ղեկավար որդաններում: Ամենուրեք գործարաններում, տրեսներում, ժողկոմատներում նրանք ամեն կերպ անտեսվում եյին հին «մասնագետներին» կողմից, վորոնք գերազանցում եյին յերիտասարդ մասնագետներին՝ իրենց հարուստ փորձով ու գիտելիքներով:

Բանվոր դասակարգի միջից յեղած տեխնիկապես գրագետ մարդկանց պակասը, տնտեսավարների վորոշ մասի մեջ տեխնիկական հարցերին չմիջամտելու վնասակար գաղափարի տիրապետումը, իրենց խնդիրներն իբրև «ընդհանրապես» ղեկավարման խնդիրներ գիտելը—այս բոլորը դյուրացնում էր բուրժուազիային կողմնակից մնացած հին մասնագետների վնասարարական աշխատանքը և հնարավոր էր դարձնում վնասարարական ոջախների

առաջացումն արդյունաբերութեան, տրանսպորտի և գյուղատնտեսութեան զանազան բնագավառներում:

«Շախտիի գործի ելութիւնն ու իմաստն այն է,—ասել է ընկեր Ստալինը,— վոր մենք հանդիսացանք զբեթե անդեն և միանգամայն հետամնաց, մինչև խախտառկութեան աստիճան հետամնաց՝ մեր արդյունաբերութիւնը բանալոր դասակարգի գործին նախընտրած մասնադեմների վորոշ միւլիմով ապահովելու գործում: Շախտիի գործից բղխող դասն այն է, վոր արագացնենք բանալոր դասակարգի մարդկանցից նոր տեխնիկական ինտելիգենցիա կազմաւորելու, ստեղծելու տեմպը, մարդկանցից, վորոնք նախընտրած են սոցիալիզմի գործին և ընդունակ են տեխնիկական զեկաւարելու մեր սոցիալիստական արդյունաբերութիւնը»¹:

Կուսակցութիւնն ամենայն կտրուկութեամբ զբեց՝ բանալոր դասակարգի մարդկանցից ամենաարագ կերպով նոր տեխնիկական ինտելիգենցիա ստեղծելու հարցը:

Ընկեր Ստալինն առանձնապէս ընդգծեց՝

«վորպեսզի դասակարգային թշնամիների դիմադրութիւնը հետ մղենք և սոցիալիզմի առաջնադասման համար ճանապարհ մաքրենք, հարկաւոր է, բացի մնացած բոլոր բաներից, սրել մեր բոլոր կազմակերպութիւնները, նրանց մաքրել բոլորովորակաբար, բարելաւել նրանց կազմերը և մոբիլիզացիայի յենթարկել բանալոր դասակարգի ու գյուղի աշխատավորական խաւերի միլիոնավոր մասսաներին ընդդէմ քաղաքի ու գյուղի կապիտալիստական տարրերի:

Ահա թե ինչպիսի դասակարգային տեղաշարժերի հողի վրա յեն ծագել մեր կուսակցութեան այժմյան լոզունգները»²:

Դրանք լոզունգներն էլին ինքնաքննադատութեան ծավալման համար բոլորովորակաբար զեմ պայքարելու և խորհրդային ապարատի զտման, նոր տնտեսական կազմեր և կարմիր մասնադեմներ ստեղծելու, կոլտնտեսային և խորհրդային շինարարութիւնն ուժեղացնելու, կուլակի վրա հարձակւելու, ինքնարժեքի իջեցման, պրոֆիտիստական աշխատանքի պրակտիկայի բարելաւման, կուսակցութեան զտման և այլն:

Կուսակցութիւնը մեծ Ստալինի զեկաւարութեամբ ճիշտ գնահատեց ստեղծւած իրադրութեան յուրահատկութիւնը, ին-

չուստրացման և կոլեկտիւիզման ծրագիր մշակեց, այդ ծրագիրը ճիշտ ստրատեգիայով ու տակտիկայով ապահովեց, ժամանակին իմացավ ու հասկացավ յերկրում կատարւող դասակարգային տեղաշարժերը, դասակարգային թշնամիների նոր տակտիկան ու վնասարարութիւնը, աշխատավորների մասսաներին մոբիլիզացիայի յենթարկելով զգաւորութիւնների հաղթահարման համար, սոցիալիստական հարձակում ծավալեց:

Ամբողջ ճակատով ծավալուն սոցիալիստական հարձակման անցնելը վճռողական պատմական բեկում էր սոցիալիստական հեղափոխութեան պատմութեան մեջ:

«Հարցն այսպէս էր դրւած—կամ մենք այդ խնդիրը կլուծենք ամենակարճ ժամանակամիջոցում և կամրացնենք մեր յերկրում սոցիալիզմը, կամ մենք այդ չենք լուծի, և այն ժամանակ մեր յերկրը—տեխնիկական թույլ և կուլտուրական տեսակետից խաւար—կիւրցնի իր անկախութիւնն ու կդառնա իմպերիալիստական պետութիւնների խաղի առարկան» (Ստալին):

* * *

Այդ պատմական բեկման պայմաններում,— բեկում, վորը նշանակում էր վճռական հարձակում կապիտալիստական տարրերի վրա և վորն առաջ բերեց այդ տարրերի սուր դիմադրութիւնը,— կուսակցութեան մեջ ծագեց աջ թեքումը, վորը գլխավորում էլին Բուխարին, Ռիկովը, Տոմսկին, Ուզլանովը:

Աջ ուղարտունիստական խմբավորումը՝ հարձակւող սոցիալիզմի դեմ ցույց տրւող կուլակային հակահեղափոխական դիմադրութեան անմիջական ծնունդն էր:

ԱԶԵՐԻ ՊԱՅԳԱՐԸ

ՍՈՅՅԱԼԻԶՄԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԽՍՀՄ-ՈՒՄ

ՅԵՎ ՆՐԱՆՅ՝ ԲԱՆԴԻՏՆԵՐԻ ԱՆԱՐԳ ՇԱՅԿԱ ԴԱՌՆԱԼԸ

Բուխարինի, Տոմսկու, Ռիկովի, Ուզլանովի գլխավորած աջ-ուղարտունիստական խմբավորումը կատաղի պայքար մղեց կուսակցութեան գլխավոր գծի դեմ, պահանջեց կծկել արդյունաբերական շինարարութիւնը, դադարեցնել կոլտնտեսութիւնների և խորհրդայնութիւնների շինարարութիւնը, թուլացնել ճշգրտումը կուլակի վրա:

Աջերն աջակիսով հանդես ելին զալիս մեր յերկրում սո-

¹ Ստալին, Լենինիզմի հարցերը, էջ 345, ռուս. 9-րդ հրատ.

² Ստալին, Լենինիզմի հարցերը, էջ 243—244, ռուս. 10-րդ հրատ.

ցիտը կառուցելու դեմ և ըստ ելուծյան կանոնացին կապի-
տալիզմի վերահաստատման ուղու վրա:

Այժմ զգվելի ֆրակցիոն պայքար սկսեցին կուսակցության
դեմ: Բուխարինը հավաքում էր Կոմինտերնում յեղած աջ-ոպոր-
տունիստական տարրերին, համախմբում էր իր մի բուռն ձեռ-
նասուններին, բուրժուական սրիկաներին, այսպես կոչված ջա-
հեղները բուխարինյան դպրոցը, վորի մեջ մտնում էին՝ Սլեպ-
կովը, Մարեցկին, Այխենվալդը, Ջայցեվը և մյուսները: Ռիկո-
վը խնամում էր խորհրդային ապարատի աջ ոպորտունիստնե-
րին: Տոմսկին կատարում էր ֆրակցիոն աշխատանքը պրոֆիու-
թյուններում: Ուզլանովն իր արքայականները—Ռյուտինի, Կոտովի,
Կուլիկովի հետ խմբավորում էր Մոսկվայի կուսակցական կազ-
մակերպության մեջ յեղած աջ ոպորտունիստներին:

Իրենց հակակուսակցական պայքարի հենց սկզբում աջ կա-
պիտուլանտները հանդես յեկան վորպես տրոցկիստական-դինով-
յեվական հակահեղափոխականների գործակիցներ: Կապիտուլա-
ցիայի միասնական պլատֆորմը, կապիտալիզմի վերահաստատման
պլատֆորմը, հիմք ծառայեց կուսակցության բոլոր թշնամիներ-
ի միավորման:

1928 թվականի ամառը Բուխարինը, թունդ յերկերեսա-
նի, հակահեղափոխական Սոկոլնիկովի միջոցով, դադանի բա-
նակցություններ էր վարում հակահեղափոխական Կամենևի
հետ, նպատակ ունենալով համախմբելու աջերին և տրոցկիստ-
ներին՝ կուսակցության դեմ պայքարելու համար:

Բուխարինը տրոցկիստների հետ վարած այդ բանակցու-
թյուններում հանդես յեկավ Կենտրոնական Կոմիտեյի հասցեյին
ուղղված զգվելի հայհոյանքներով և գուշակեց կուսակցության
ու խորհրդային իշխանության, իբր թե, խորտակումը:

Հենց նույն օրերը, յերբ Բուխարինը տրոցկիստների հետ
բանակցություններ էր վարում կուսակցության ԿԿ-ի դեմ միա-
տեղ պայքար մղելու մասին, ֆրակցիոն ըլոկի մասին, նա ԿԿ-ի
պլենումում յերկերեսանիորեն ձայն տվեց տնտեսական դրու-
թյան և հացամթերումների քաղաքականության վերաբերյալ
բանաձևի ոգտին:

Ռիկովը, Տոմսկին իրադեկ էյին բանակցություններին: Նը-
բանք յերեքն էլ կուսակցությունից թաղցրին՝ կուսակցությու-
նից վտարված տրոցկիստների հետ ունեցած իրենց հանցավոր
անդրկուլիսային կապերի փաստերը:

Այբերի դավաճանական գործունեյությունը և նրանց ղեկավար-

բառորական պլատֆորմը մերկացվեցին ընկեր Ստալինի, ԿԿ-ի,
ամբողջ կուսակցության կողմից:

1928 թվականին Մոսկվայում տեղի էյին ունենում Կոմին-
տերնի ՎՄ կոնգրեսի նիստերը: Կոմինտերնի ՎՄ կոնգրեսն ընդու-
նեց միջադգային դրության վերաբերյալ ստալինյան գնահատա-
կանը: Ստալինյան գնահատականի դեմ դուրս յեկավ Բուխարի-
նը: Բուխարինը ՎՄ կոնգրեսի ոտարերկրյա պատգամավորներին
ուղարկեց միջադգային դրության վերաբերյալ իր թեզիսները՝
առանց ՀամԿ(բ)Կ-ի պատգամավորության կողմից այդ թեզիս-
ները նախնական քննարկման յենթարկվելու: Բուխարինյան թե-
զիսները ոպորտունիստական գնահատական էյին տալիս կապի-
տալիզմի ստաբիլիզացիային և Կոմինտերնի խնդիրներին:

Այդ ըստ ելուծյան սոցիալ - դեմոկրատական գնահատա-
կանն ուղղված էր ստաբիլիզացիայի ստալինյան այն գնահատա-
կանի դեմ, վորի համաձայն ստաբիլիզացիան, բնորոշված էր
վորպես անհաստատ, անկայուն և կապիտալիզմի համաշխար-
հային ճղնաժամի սրման հետևանքով՝ խախտվող ստաբիլիզա-
ցիա:

Բուխարինը թեզիսներում լուության էր տվել Կոմինտերնի
սեկցիաներում յեղած հաշտվողականների դեմ, աջ թեքման դեմ
պայքարելու խնդիրները, լուություն էր պահպանել Կոմինտերնի
յերկաթե կարգապահության անհրաժեշտության մասին: Յեվ այդ
պատահական չէր, վորովհետեւ Բուխարինն աշխատում էր այդ
ճանապարհով թուլացնել կուսակցության և Կոմինտերնի դիրքե-
րը աջ թեքման դեմ մղվող պայքարում և աջերին ապահովել կազ-
րերի պահպանումը ֆրակցիոն կազմակերպության համար: Այն-
րի այդ մանյովրները մերկացրեց ընկեր Ստալինը:

Ընկեր Ստալինի նախաձեռնությամբ Կոմինտերնի ՎՄ կոն-
գրեսի ՀամԿ(բ)Կ-ի պատգամավորությունն ուղղումներ մտցրեց,
վորոնք շարադրում էյին կուսակցության դիրքը Կոմինտերնի
քաղաքականության հիմնական հարցերի վերաբերյալ (ստաբիլի-
զացիայի բնույթի մասին, ձախ սոցիալ-դեմոկրատիայի դեմ
պայքարելու մասին, Կոմինտերնում յեղած հաշտվողականության
դեմ պայքարելու մասին, Կոմինտերնի սեկցիաներում յերկաթե
կարգապահություն ունենալու մասին): Ըստ ելուծյան բոլոր այդ
ուղղումները նշանակում էյին, վոր ՀամԿ(բ)Կ-ի պատգամավո-
րությունը մտցնում է նոր թեզիսներ միջադգային դրության
մասին: Այդ թեզիսներն էլ հենց ընդունեց Կոմինտերնի կոնգրե-
սը:

1282
37



1928 թվականի ամառն աշերը քայքայիչ ֆրակցիոն դոր-
ծունեություն ծավալեցին Մոսկվայի կուսակցական կազմակեր-
պություն մեջ: Ուղղանումյան ղեկավարությունը Մոսկվայի կո-
միտեյում սկսեց «մշակել» կազմակերպություն ղեկավար կադ-
րերին: Գումարվում էին դոնիակ նիստեր, վորտեղ դրվում է-
ին Ուղղանումի խոհանարարին ինֆորմացիաները դժվարություն-
ների մասին՝ նպատակ ունենալով ակտիվել ԿԿ-ի քաղաքականու-
թյան դեմ լարելու: Ընտրում էին «իրենց» կադրերը: Այն աշ-
խատողները, վորոնք ԿԿ-ի գիծն էին անցկացնում, վորոնք հա-
մաձայն չէին ուղղանումյան ղեկավարությանը, հետ էին մըղ-
վում ղեկավար աշխատանքից, «դուրս էին շարտվում» և փո-
խարինվում էին աջերով:

Ընկեր Ստալինի ղեկավարությամբ մերկացվեց աջերի հա-
կակուսակցական աշխատանքը Մոսկվայի կուսակցական կազմա-
կերպության մեջ: Մոսկվայի բոլշևիկները դուրս չպրտեցին Ուղ-
լանումին, Կոտովին, Կուլիկովին և նրանց արբանյակներին:

Ուղղանումյան ղեկավարությունը Մոսկվայի կուսակցական
կազմակերպությունից արտաքսելուց հետո Մոսկվայի Կոմիտեյի
առաջին քարտուղար ընտրվեց ընկ. Մոլոտովը: Ընկեր Ստալի-
նի ղեկավարությամբ՝ կուսակցության Մոսկվայի կոմիտեն ընկ.
Մոլոտովի գլխավորությամբ բարձրացրեց ու աշխուժացրեց
Մոսկվայի կուսակցական կազմակերպության աշխատանքը, այն
Վաղմակերպության, վորն էր և մնաց ստալինյան Կենտրոնական
կոմիտեյի պատվարը:

1928 թվականի աշնանը աշերը, ուղտվելով հացամթերում-
ների և մատակարարման դրժում յեղած դժվարություններից,
վերստին հանդես են գալիս կուսակցության դեմ: Ժողովրդա-
կան տնտեսության 1928—1929 տ. կոնտրոլ թվերի քննարկման
ժամանակ Բուխարինը, առանց ԿԿ-ի գիտություն, հրապարակում
է «Տնտեսագետի դիտողությունները» վերաբերյալ մի մեծ
հոդված, վորի մեջ հանդես են գալիս՝ վերցրած ինդուստրացման
տեմպերի դեմ, ԿԿ-ի քաղաքականության դեմ: Բուխարինի ա-
մենագլխի չհոդվածը—«Տնտեսագետի դիտողությունները» հրա-
պարակ դալը թեւավորեց բուրժուական, սոցիալիստական հար-
ձակմանը թշնամի բոլոր տարրերին: Գլուխ բարձրացրին թըշ-
նամիները—բուրժուական տնտեսագետները, վնասարարները:
«Տնտեսագետի դիտողությունները» հոդվածը վոչ միայն հոչակեց
աջ ուղղիցիայի «մանիֆեստը». նա կուսակցության թշնամիներ-
ին դենք էր տալիս, վորը թունավորված էր չարանենդ հակա-

կուսակցական զրպարտանքի թունով: «Տնտեսագետի դիտողու-
թյունները» իր խնդիրն էր դարձրել ապացուցել ԿԿ-ի քաղաքա-
կանության ձախողումը և կոչ անել կուսակցական ղեկավարու-
թյանը փոխելու:

1928 թվականին ԿԿ-ի նոյեմբերյան պլենումից առաջ աշերը
նորից փորձում են վախեցնել կուսակցությանը և ԿԿ-ին, հայ-
տարարություն են տալիս աշխատանքից հրաժարվելու մասին:

Կենտկոմի նոյեմբերյան պլենումը կարեւորագույն ետապնե-
րից մեկը հանդիսացավ կուսակցության կողմից աջերի դեմ
մղվող պայքարում: Ընկեր Ստալինը պլենումում մերկացրեց աջ
ոպորտունիստների պրատֆորմի կուլակային բովանդակությու-
նը, նրանց ռեստավրատորական ծրագիրը:

Վոչ պահաս խայտառակ կերպով տապալեց Տոմսկին
ՀԱՄԿԽ-ում՝ պրոֆմիությունների 1928 թ. VIII համագումար-
ում: Համագումարը կուսակցության գծի դեմ վոտքի հանելու
համար Տոմսկու կատարած փորձը խորտակվեց:

Աջերը պրոֆմիություններում չնչին փոքրամասնություն
դուրս յեկան: ՀԱՄԿԽ-ի նախագահության մեջ մտցվեց Լ. Մ.
Կադանովիչը: Պրոֆմիություններում գոյություն ունեցող աջ-
ոպորտունիստական տարրերի և աջ-ոպորտունիստական պրակ-
տիկայի դեմ ընկ. Կադանովիչի մղած պայքարը մեծ դեր խաղաց
սոցիալիստական մրցության վերաբերյալ ստալինյան ցուցումնե-
րի իրականացման դրժում:

ԿԿ-ի նոյեմբերյան պլենումն ամենայն վճռականությամբ
հայտարարեց, վոր ներկա ժամանակում կուսակցության գլխա-
վոր վտանգը աջ, բացահայտ ոպորտունիստական թեքման վը-
տանդն է, վորը բղխում է ինչպես արդի սոցիալ-տնտեսական
իրադրությունից, այնպես և այն փաստից, վոր սոցիալիստական
իդեոլոգիայի դեմ մղած պայքարում կուսակցությունն արդեն
մի շարք վճռողական հաղթանակներ է տարել:

1929 թվականը հանդիսացավ մեծ բեկման տարի, դյուղա-
ցիական մասսաների կողմից դեպի սոցիալիզմը կատարվող պատ-
մական շրջադարձի տարի, կապիտալիստական տարրերի դեմ բու-
շևիկյան վճռական հարձակման տարի: Սոցիալիստական արչավի
ստալինյան պլանը հաղթանակում էր: Միևնույն ժամանակ այդ՝
աջ ռեստավրատորների կողմից ԿԿ-ի լենինյան-ստալինյան գծի
դեմ մղվող կատաղի պայքարի տարի յեր: Կուլակային դրժա-
կանները փորձեցին հարձակման դժվարություններից ոգուտ քա-

դել: Նրանք հորինեցին իրենց պլատֆորմը, հակադրելով այն՝ կուսակցության գլխավոր դժին:

Աջերի սուտ, վոտից գլուխ կեղծ, զրպարտիչ պնդումներն իրենց նպատակն էին դարձրել արատավորել կուսակցության ընդունած՝ յերկրի ինդուստրացման գլխավոր դիժը, արատավորել սոցիալիստական հարձակման այն դիժը, վոր ԿԿ-ը վարում էր ընկեր Ստալինի ղեկավարությամբ:

«Մաքուր» իմպերիալիզմի թեորիան Բուխարինը հասցնում է մինչև վերջը: 1929 թվին, շարունակելով գրոհները կուսակցության դեմ, Բուխարինը հանդես է գալիս «կազմակերպված անտնտեսության թեորիա» վերտառությամբ հոգւածով: Այդ հոգւածում նա պնդում է, վոր «չուկայի, գնբի, մրցակցության, ճգնաժամերի պրոբլեմը ամէլի ու ամէլի յե դառնում համաշխարհային տնտեսության պրոբլեմ, վոխարինելով յերկրի ներսում կազմակերպության պրոբլեմով»:

Բուխարինի կողմից վաճանի վրա բարձրացված «կազմակերպված կապիտալիզմի» այդ բուրժուական թեորիան հոգւոր գենը էր տալիս թե՛ աջերին, թե՛ տրոցկիստներին՝ ԽՍՀՄ-ում սոցիալիզմի շինարարության դեմ նրանց մղած պայքարում:

Հետագայում ժողովրդի թշնամիները — թե՛ տրոցկիստները, թե՛ աջերը — համամիտ էին այն բանում, վոր Փաշիգմը — այդ «կազմակերպված կապիտալիզմ» է, վորի հետ «սլետը է լեզու դտնել և վորին սլետը է սպասավորել»:

«... Կենտրոնի ղեկավար անդամները, — դատարանում ցուցմունք էր տալիս ժողովրդի թշնամի Սոկոլնիկովը, — գտնում էին, վոր վորպես մեկուսացած հեղափոխություն մեր հեղափոխությունը չի կարող դիմանալ վորպես սոցիալիստական, վոր կառուցկիական ուլտրաիմպերիալիզմի թեորիան և նրան ազդակից բուխարինյան կազմակերպված կապիտալիզմի թեորիան ճիշտ դուրս չեկան: Մենք գտնում էինք, վոր Փաշիգմը — այդ ամենակազմակերպված կապիտալիզմն է, նա հաղթում է, դրավում է Յեվրոպան, խեղդում է մեզ: Այդ պատճառով ամէլի լավ է նրա հետ համաձայնության գալ, ամէլի լավ է վորևիցե գիշում անել՝ սոցիալիզմից դեպի կապիտալիզմ նահանջելու իմաստով...»¹:

ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի և ԿԿՀ-ի միացյալ պլենումում 1929 թվականի ապրիլին ընկեր Ստալինը ամէկ կապիտալիստների Ֆրակցիոն պլատֆորմի, նրանց հակալենինյան հայացքի վոնչացնող

քննադատությունը՝ դասակարգային պայքարը մարելու և «կուլակը սոցիալիզմի մեջ ներաճելու» մասին. դասակարգային կուլակը ԽՍՀՄ-ում սրվելու պատճառների մասին. գյուղացիության, նրա դասակարգային խմբավորումների և պրոլետարիատի ու գյուղացիության դաշինքի քաղաքականության մասին. նեպի մասին՝ վորպես շուկայի տարերքի անսահմանափակ արձակման. ինդուստրիալիզմի զարգացման տեմպերի իջեցման մասին. զոդման նոր ձևերի ժխտման մասին. աջերի պլանի մասին, վորը հակազդված էր կուսակցության պլանին և այլն: Աջերը դարձան կոմինտերնում յեղած բոլոր ոպորտունիստական տարրերի ձգողության գաղտնի կենտրոնը: Մեր յերկրի ներսում նրանք կոչ էին անում վախճել զգվարություններից, նահանջել նրանց առջև, գենքերը ցած դնել դասակարգային թշնամու հանդեպ:

Աջերի ամբողջ պլատֆորմը կուլակային էր. այդ պատճառով էլ նրանք պայքարում էին ինդուստրացման, կուլեկտիվացման դեմ և կուլակությունը ջախջախելու դեմ:

Պլենումն ընդունեց, վոր աջերի հայացքները անհամատեղելի յեն կուսակցության գլխավոր դժի հետ: Բուխարինը և Տոմսկին հեռացվեցին իրենց գրաված պոստերից:

Ընկեր Ստալինի ղեկավարությամբ կուսակցությունը մերկացրեց աջ ոպորտունիստների բուրժուական-կուլակային դիրքավորումները և բանվոր դասակարգին ցույց տվեց սոցիալիզմի հետագա հաղթանակների ուղիղ և ճիշտ ճանապարհը:

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ Հեղափոխության XII տարեդարձին կուսակցությունը յեկավ խոշոր հաղթանակներով: Խորտակվեցին աջերի բոլոր գուշակությունները: Գյուղացիները մասսաներով լցվեցին կոլտնտեսությունները: Կործանվում են կապիտալիզմի ռեստավրացիայի վերաբերյալ բոլոր յերադները: Մենք ամբողջ թափով գնում ենք ինդուստրացման ուղիով: Ծավալելով գյուղատնտեսության տեխնիկական վերադինումը:

Հենց այդ ժամանակ Բուխարինի գալրոցին պատկանող աջերը յելույթ են կազմակերպում ի պաշտպանություն իրենց ռեստավրատորական պլատֆորմի (Սլեպկով, Ալխենպալը, Զայցել և մյուսները): 1930 թվականի դարնանը Մոսկվայում բանվորների առջև հանդես է գալիս Ուզլանովն իր արբանյակների հետ: Բոլոր աջերը մասսաների մեջ կատարյալ կրախի յեն մատնելով՝ տրոցկիստների և զինովյեվականների նման: Աջերը բարեկամներ են գտնում սոցիալիզմի յերդվյալ թշնամիների բանակում, վոր

¹ «Большевик» № 3, 1937 թ., էջ 7:

րոնք իրենց հակահեղափոխական հաշիվները կառուցում են նրանց հաղթության վրա:

Հակահեղափոխական Գրոմանը մենչեիկ-ինտերվենյունիստների դատաւարության ժամանակ ցուցմունք տվեց, Վոր «աջ ուղղիցիայից յեւնող բոլոր նախագծումների պաշտպանութիւնը» խորհրդային իշխանության դեմ մղած իրենց պայքարի մեթոդներին մեկն եր:

1929 թվականի դեկտեմբերին ընկեր Ստալինը մարքսիստ-ադրարադեաների կոնֆերենցիայում առաջ քաշեց համատարած կոլեկտիւացման հիման վրա կուլակութիւնը վորպես դասակարգ վերացնելու համաշխարհային-պատմական լոզունգը:

Կուսակցութիւնը հանձարեղ Ստալինի դեկաւարութիւնով վիթխարի աշխատանք ծաւալեց այդ լոզունգի իրականացման համար:

Այնքի դեմ մղվող հետադա պայքարում և կոլտնտեսային շարժման մեջ յեղած ձախ խոտորումների դեմ մղվող պայքարում կուսակցութիւնը վիթխարի հաջողութիւններ ձեռք բերեց, ամբողջ ճակատով սոցիալիստական հարձակում ծաւալելով:

Այնքը լիակատար պարտութիւն կրեցին, վերջնականապես մերկացնելով իրենց վորպես կուլակային գործակալութիւն կուսակցութիւն մեջ: Նրանց հայացքները անհամատեղելի դարձան ՀամԿ(բ)Կ-ի շարքերում մնալու հետ:

XVI համագումարում ընկեր Ստալինն ասում եր, Վոր աջ թեւքումը

«արտացոլում է կուլակային վտանգը, իսկ կուլակային վտանգը տվյալ մոմենտում, ծաւալուն հարձակման և կապիտալիզմի արմատահանման մոմենտում, հիմնական վտանգըն է յերկրում»¹:

Ընկեր Ստալինը համագումարում բացահայտեց տրոցկիստների և կապիտալիզմի աջ ուստաւրատորների դադափարական ազդակցութիւնը, նրանց իդեոլոգիայի ու քաղաքականութիւնի կապիտալիստական բովանդակութիւնը, նրանց ծրագրերի ուստաւրատորական ելութիւնը:

«Դրանով եւ իսկապես բացատրվում է այն փաստը, — ասում եր ընկեր Ստալինը, — Վոր տրոցկիստների հետ ունեցած իրենց աքլորակութիւններն աջ ուլիստները սովորա-

¹ Ստալին, ԿԿ-ի քաղաքական հաշիւութիւնը ՀամԿ(բ)Կ-ի XVI համագումարին, էջ 84—85, ուսու. հր. 1936 թ.:

բար պսակում են անդրկուլիսային բանակցութիւններով տրոցկիստների հետ՝ նրանց հետ բլոկ կազմելու վերաբերյալ»¹:

Համագումարն աջ ուղղիցիայի հայացքներն անհամատեղելի ընդունեց կուսակցութիւն շարքերում մնալու հետ:

Սոցիալիզմի մեծագույն հաղթանակների և կուսակցութիւն լենինյան-ստալինյան դժի հաղթութիւն դեմ-հանդիման Բուխարինը, Ռիկովը, Տոմսկին, Ուզլանովը շարունակում եյին յերկերեսանիորեն խաբել կուսակցութիւնը, խոսքով հայտարարելով, թե իրենք, իբր, համաձայն են կուսակցութիւն քաղաքականութիւնը, իսկ իրականում ոգնում եյին թշնամիներին: 1930 թվականին կուսակցութիւնը մերկացրեց Սիւրցովի—Լոմինաձեյի աջ-ձախիկային բլոկը, վորն ի մի յեք հաւաքված աջ և տրոցկիստական տարրերից: 1932 թվականի հոկտեմբերին մերկացվեց ու ջախջախվեց Ռյուտինի—Ուզլանովի հակահեղափոխական խումբը, վորին ակտիւ մասնակցութիւն եյին ցույց տալիս նաև Բուխարինի աշակերտները—Սլեպկովը և Մարեցկին:

Այդ հակահեղափոխական խմբակի ռեստաւրատորական պահանջները ներկայացված եյին իրենց ամենամերկ ձևով: Հակահեղափոխականների այդ բանդան փորձում եր դադանի բուրժուական—կուլակային կազմակերպութիւն ստեղծել, վորպեսզի հաջողեցնի կապիտալիզմի վերահաստատումը ԽՍՀՄ-ում: Նա պահանջում եր դռները բանալ ոտարեկրյա կապիտալիզմի առաջ, ցրել խորհրդայնութիւնները և կոլտնտեսութիւնները: Խմբի մասնակիցները վտարվեցին կուսակցութիւնից վորպես քայքայվածներ, կոմունիզմի ու խորհրդային իշխանութիւն թշնամի դարձածներ, վորպես բանվոր դասակարգի կուսակցութիւն դավաճաններ, վորոնք փորձել եյին դադանի բուրժուական—կուլակային կազմակերպութիւն ստեղծել և գլուխ բերել կապիտալիզմի վերահաստատումը մեր յերկրում:

Ռյուտինի այդ ռեստաւրատորական պլանֆորմը, ինչպես այդ աշխատանքը, իրականում աջ ուստաւրատորների ամբողջ խմբի ծրագիրն եր հանդիսանում, սակայն միայն կոնսպիրատիւ նկատումներով նա աջ պարագլուխների կողմից ներկայացվում եր վորպես առանձին խմբի պլանֆորմ:

Կուսակցութիւն և խորհրդային իշխանութիւն դեմ մղվող

¹ Ստալին, ԿԿ-ի քաղաքական հաշիւութիւնը ՀամԿ(բ)Կ-ի XVI համագումարին, էջ 89, ուսու. հր. 1936 թ.:

ստոր, հակահեղափոխական պայքարի ուղու վրա կանգնած սրկ-
կաների մեջ մերկացվեց զգվելի յերկերեսանի Ուզլանովը: Ուզ-
լանովը, ինչպես նաև բուխարինյան ձեռնասուռներն ամենասերտ
կերպով կապված էին զարչելի դավաճանների և հակահեղա-
փոխականների—բանդիտային շայկայի պարավուններ՝ Զինովյե-
վի ու Կամենեվի հետ: Շուտով յերևան յեկավ, վոր կապիտա-
լիզմի աջ ուստավրատորները մյուս պարագլուխները ևս, վո-
րոնք խոսքով զղջացել էին կուսակցութեան առջև, իրականում
սլաշուպանում են մերկապարանոց սրկյաներին, խորհրդային իշ-
խանութեան թշնամիներին:

Այսերի պարագլուխները վոզեորում, խրախուսում էին
Սմիրնովի, Եյսմոնտի, Տոլմաչեվի հակահեղափոխական խմբի
ստոր քայքայիչ աշխատանքը:

Ավելի ու ավելի սրելով զարչելի յերկերեսանություն ի-
րենց անարգ զենքը, նրանք սուտ զղջումների և հավաստիացում-
ների քողի տակ՝ տրոցկիստական բանդիտների հետ միասին կա-
տարում էին իրենց ամենաստոր հանցագործությունները կու-
սակցության դեմ, մեր հայրենիքի դեմ: Բուխարինը, Ռիկովը,
Տոմսկին, Ուզլանովն ունեյին իրենց կենտրոնը, վորն աշխա-
տում էր ձեռք-ձեռքի տված գերմանական պահնորդական բաժնի
տրոցկիստական գործակալների հետ և լրտեսների, դիվերսանտ-
ների, վնասարարների ու մարդասպանների իր կադրերն էր մա-
տակարարում Փաշխտներին:

Կապիտալիզմի աջ ուստավրատորները վաղուց արդեն դար-
ձել էին նույնպիսի, ինչպես և տրոցկիստները, ժողովրդի ա-
նարգ քշնամիների բանդա, վորոնք նպատակ էին դրել Փաշխ-
տական ինտերվենցիայի ոգնությունը իրագործել ԽՍՀՄ-ում բան-
վորների ու գյուղացիների իշխանության տապալումը և կարվա-
ծատերերի ու կապիտալիստների իշխանության վերահաստա-
տումը:

Խորհրդային քննչական ուղեանները մինչև վերջը կքանդեն
աջ թախիթիությունների բանդիտական շայկայի հակահեղափոխական
չարագործությունների կծիկը:

«В помощь партучебе» № 7, 1937 г. փարս:



ՈՒՂՂՈՒՄ

Եջ
4տող
11 վ.տպված է
քաղաքականպետք է լինի
քաղաքացիական

ՀՀ Ազգային գրադարան



NL0183233

**ПРАВЫЕ СООБЩНИКИ
ТРОЦКИСТСКОЙ БАНДЫ**
Историческая справка
Армипартиздат, Ереван, 1997